**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ՝ 19.01.2026Թ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

---

*17-ը հունիսի, 2026թ..* *ք. Երևան*

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Թ Ի Վ  ՄԽ-Ո- 09

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության՝ 19.01.2026թ ձևավորված մրցութային խորհրդի (այսուհետ՝ Մրցութային խորհուրդ) 2026թ. ապրիլի 27-ին կայացրած թիվ ՄԽ-Ո-08 որոշմամբ, ամփոփելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրելու նպատակով 2026թ. ապրիլի 27-ին անցկացված մրցույթի արդյունքները, մրցույթի հաղթող չի ճանաչել,

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 10.1-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 10.4-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետով, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 06.05.2026թ. ընդունված համար ՀՕ-219-Ն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Մրցութային խորհուրդը՝

## ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայտարարել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության նոր մրցույթ,

2. Սահմանել, որ փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է 2026թ. հուլիսի 7-ը ներառյալ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀԱՐՈՒԹ ԱԿԼՈՒՆՑ

ԱՆԴՐԱՆԻԿ ԵՂՈՅԱՆ

ՄՐՈՒՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ՋՈՒԼՀԱԿՅԱՆ